| | |
|---|---|
| **Հավելված 1**<br>**2023թ. ապրիլի 25 -ի թիվ 03-Լ/23**<br>**հրամանի** | **Appendix 1 to**<br>**Decree N 03-L/23, April 25, 2023** |
| **ԿԱՐԳ**<br>**ՀԱՀ-ի ակադեմիական և ռազմավարական պլանավորման խորհուրդ կազմելու մասին** | **PROCEDURE**<br>**On forming an AUA Academic and Strategic Planning Council** |
| **Նպատակը** | **Purpose** |
| Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «ՀԱՀ» կամ «Համալսարան») Ակադեմիական և ռազմավարական պլանավորման խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») կազմը և գործառույթները: Խորհրդի նպատակն է վերահսկել համալսարանի ակադեմիական և ռազմավարական պլանավորման գործընթացները՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով, ռազմավարական առաջնահերթությունների հայտնաբերումը/առաջարկումը, ուսումնական և հետազոտական զարգացման ոլորտները և ուղղությունները, նոր կրթական աստիճան շնորհող ծրագրերի ստեղծումը, միջազգային համագործակցության առաջնահերթությունները, շենքային պայմանների բարելավումը և Խորհրդի կամ Գործադիր խմբի կողմից առանձնացված այլ թեմաների հետ առնչվող հարցեր: | The purpose of this document is to describe the membership and functions of the Academic and Strategic Planning Council (hereinafter referred to as the "Council") at the "American University of Armenia" Fund (hereinafter referred to as "AUA" or "University"). The purpose of the Council is to provide oversight of the academic and strategic planning processes of the University, including but not limited to identification of strategic priorities, areas and directions of educational and research development, establishment of new degree programs, international cooperation priorities, enhancement of facilities, and other items as identified by the Council or the Executive Team. |
| **Կազմը** | **Membership** |
| Խորհրդի մշտական անդամներն են՝ | Standing members of the Council include: |
| • Նախագահ (հանդիսանում է Խորհրդի նախագահը) | • President (serves as Chair) |
| • Ուսումնական հարցերով փոխնախագահ | • Provost and Vice President for Academic Affairs |
| • Վարչական գործառույթների գծով փոխնախագահ | • Vice President of Operations / COO |
| • Ֆինանսական գծով փոխնախագահ | • Vice President of Finance / CFO |
| • Զարգացման գծով փոխնախագահ | • Vice President of Development |
| • Փոխնախագահի տեղակալ ինտեգրացման գծով | • Vice Provost for Integration |
| • Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկան | • Dean of the College of Humanities and Social Sciences |

| | |
|---|---|
| • Զավէն և Սոնիա Ագեան բնագիտության և ճարտարագիտության ֆակուլտետի դեկան | • Dean of the Zaven & Sonia Akian College of Science and Engineering |
| • Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան | • Dean of the Manoogian Simone College of Business & Economics |
| • Ջերալդ և Փաթրիշա Թրփանճեան Առողջապահական գիտությունների ֆակուլտետի դեկան | • Dean of the Gerald & Patricia College of Health Sciences |
| • Ընդհանուր կրթության դեկան | • Dean of General Education |
| • Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն | • Director, Acopian Center for the Environment |
| • Ձեռներեցության և նորարարական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն | • Director of the Entrepreneurship & Product Innovation Center |
| • Քաղաքական վերլուծության Թրփանճեան կենտրոնի տնօրեն | • Director of the Turpanjian Center for Policy Analysis |
| • Կիրառական լեզվաբանության կենտրոնի տնօրեն | • Director of the Center for Research in Applied Linguistics |
| • Զվարթ Աւետիսեան-Օնանյան առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի տնօրեն | • Director of the Zvart Avedisian-Onanian Center for Health Services Research & Development |
| • Փոլ Աւետիսեան գործարարության և զարգացման կենտրոնի տնօրեն | • Director of the Paul Avedisian Center for Business Research & Development |
| • Բաց կրթության բաժնի տնօրեն | • Director of Open Education |
| • Դասախոսական սենատի նախագահ | • Chair of the Faculty Senate |
| • Աշխատակազմի խորհրդի նախագահ | • Chair of the Staff Assembly |
| • Ուսանողական խորհրդի ներկայացուցիչ | • Representative of the Student Council |
| Խորհրդին ադմինիստրատիվ աջակցություն կապահովի նախագահի գրասենյակի գործադիր մենեջերը: | The Executive Manager of the Office of the President will provide administrative support to the Council. |
| **Խորհրդի հրավիրված անդամներ** | **Invited members of the Council** |
| • Անհրաժեշտության դեպքում, քննարկման առարկայից ելնելով, Խորհուրդը կարող է հրավիրել ՀԱՀ համայնքի այլ անդամների մասնակցելու հանդիպումներին | • Depending on the topics of discussion, the Council may invite other members of the AUA community to join the meetings, should such a need arise |
| **Հանձառությունները** | **Charge** |
| Խորհրդի պարտականություններն են՝ | Responsibilities of the Council include: |
| • Ռազմավարական պլանավորման գործընթացին առնչվող | • Reviewing and recommending procedures regarding the strategic planning process |

| | |
|---|---|
| ընթացակարգերի ուսումնասիրություն և առաջարկությունների տրամադրում | |
| • Հիմնական կատարողական ցուցիչների մշակման և չափման ուսումնասիրություն | • Reviewing KPI (key performance indicator) development and how KPIs are measured |
| • Տարեկան թեմատիկ նպատակների առաջնահերթության ուսումնասիրության և առաջարկությունների տրամադրում | • Reviewing and recommending the prioritization of yearly thematic objectives |
| • Ռազմավարական խմբերի կողմից ինստիտուցիոնալ կարիքների և կարողությունների վրա հիմնված առաջնահերթ գործողությունների և տակտիկայի վերաբերյալ նախատեսվող գործողությունների սինթեզում և առաջնահերթությունների սահմանում | • Synthesizing and prioritizing inputs on action priorities and tactics submitted by strategic units based on institutional needs and capacity |
| • Տարեկան ռազմավարական գործընթացի բարելավումներին առնչվող առանցքային ուսումնական և վարչական հարցերի վերաբերյալ քննարկումների և ուսումնասիրությունների նախաձեռնում | • Initiating discussions and studies on key academic and administrative issues related to improvements of the yearly strategic process |
| • Հաղորդակցական կապուղիների առաջարկում՝ երաշխավորելու ՀԱՀ-ի համայնքի համապատասխան հատվածների ներգրավումը առանցքային ինստիտուցիոնալ հարցերի և նախաձեռնությունների շուրջ քննարկումների գործընթացներում | • Recommending communication channels to ensure that appropriate sectors of the AUA community are engaged in discussion processes related to key institutional issues and initiatives |
| • Համալսարանում նոր կրթական աստիճան շնորհող ծրագրերի և Բաց կրթության բաժնի ծրագրերի մշակմանն առնչվող հարցերի քննարկում և առաջարկությունների տրամադրում | • Discuss issues and make recommendations related to the development of new academic programs and Open Education programs at the University |
| • Ուսման վարձի և կրթական այլ վարձավճարներին առնչվող հարցերի քննարկում և առաջարկությունների տրամադրում | • Discuss issues and make recommendations related to tuition and academic fees |
| • Դեկանների, ամբիոնի վարիչների և ակադեմիական անձնակազմի ընտրությանն առնչվող հարցերի քննարկում և առաջարկությունների տրամադրում | • Discuss and make recommendations on the rules used to select deans, program chairs, and academic staff |
| • Համալսարանում իրականացվող հետազոտությունների, իրազեկմանը և ուսուցմանն առնչվող հարցերի | • Discuss and make recommendations on the direction |

| | |
|---|---|
| քննարկում և առաջարկությունների տրամադրում | of research and outreach activities on campus |
| • ՀԱՀ-ի միջգիտակարգային և համագործակցության համատեքստում կրթական, հետազոտական և իրազեկման աշխատանքներում ներգրավվածության և հաջողության ապահովման խթաններին և գործիքներին առնչվող հարցերի քննարկում և առաջարկությունների տրամադրում | • Discuss and make recommendations on incentives and tools to enhance engagement and success for education, research and outreach in AUA transdisciplinary and collaborative actions. |
| • Կանոնների մշակում և իրագործում ժամանակավոր հանձնաժողովների համար, որոնք կարող են կազմվել հետազոտություն իրականացնելու և Խորհրդի պարտականություններին առնչվող առաջարկությունների մշակման նպատակով: | • Develop and implement rules regarding the construction of ad hoc committees that may be formed to conduct research and develop recommendations related to the charge of the Council. |
| **Ընթացակարգեր** | **Procedures** |
| • Նախագահը (կամ նշանակված իրավասու անձը) հանդես կգա որպես Խորհրդի նախագահ: Նախագահը քվեարկություններին չի մասնակցի, բացառությամբ քվեների հավասարության դեպքերի՝ քվեների մեծամասնություն ապահովելու համար: | • The President (or designee) will serve as Chair of the Council. The Chair will not vote except to break a tie vote among other members. |
| • Խորհրդի հանդիպումը կհրավիրի Նախագահը (կամ նշանակված իրավասու անձը)՝ առնվազն 24 ժամ առաջ Խորհրդի անդամներին այդ մասին ծանուցելով: Հանդիպման ձևաչափը և օրակարգը կսահմանի Նախագահը (կամ նշանակված իրավասու անձը): Հանդիպմանը քվորումը ապահովում է հանդիպմանը մասնակցող Խորհրդի անդամների մեծամասնությունը: Առաջարկությունների վերաբերյալ բոլոր որոշումները կկայացվեն Խորհրդի քվեների մեծամասնությամբ: | • The meeting of the Council will be called by the President (or designee) on not less than 24 hours' notice to the members of the Council. The format and the agenda of the meeting will be decided by the President (or designee). The quorum for a meeting of the Council is a majority of members in attendance. All decisions on recommendations are made by majority vote of the Council present at the meeting. |
| • Հանդիպումների ամփոփիչ արձանագրությունները կհաստատվեն Խորհրդի կողմից և կարխիվացվեն Նախագահի գրասենյակի կողմից: | • Summary minutes will be approved by the Council and archived by the Office of the President. |